

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 180

**Սրբագործութիւնը սկսում է վերածնունդից** – Յառաջադիմական սրբագործութիւնը Աստուծոյ շնորհքի պատուէն է՝ որը սկսում է վերածնունդից, ուր Աստուած կենդանացնում է հոգեւորապէս մեռածին, ցանելով անձի մէջ նոր հոգեւոր կեանք, ուր անձը այժմ ունի մի սուրբ տրամադրութիւն, եւ զօրադրուում է սիրել Աստծուն ու Նրա բաները:

**Աստուծոյ գերբնական գործ** – Ինչպէս փրկութեան բոլոր առումները, Աստուած է սրբագործութեան հեղինակն ու աղբիւրը: Մեր սրբութեանը մէջ եղած աճումը երբեակ Աստուծոյ մի գերբնական ներգործութիւնն է: Ա. Թեսաղոնիկեցիս 5:23-24ում կարդում ենք որ Հայրը սրբացնում է Իր ժողովրդին (Եբրայեցիս 13:20-21). Եփեսացիս 5:25-27ում կարդում ենք որ Քրիստոսը սրբացնում է Իր հարսին (Յովհաննէս 15:4-5, Գաղատացիս 2:20, Կողոսացիս 1:22, Տիտոս 2:14). եւ Հռովմայեցիս 8:13ում կարդում ենք որ Սուրբ Հոգին սրբացնում է հաւատացեալներին (Գաղատացիս 5:22-25, Եփեսացիս 3:14-17):

**Մասնատրապէս Հոգու գործն է** – Փրկանաւորութեան տնտեսութեան մէջ, Հայր Աստուածը հրովարտակել կամ ծրագրել է մեր փրկանաւորութիւնը, Որդի Աստուածը կատարել կամ գնել է մեր փրկանաւորութիւնը, եւ Հոգի Աստուածը մատակարարում կամ լրացնում է այս փրկանաւորութիւնը մեզի անձամբ: Մարդկանց փրկութեան մատակարարման վերաբերեալ, մասնատրապէս Սուրբ Հոգին է որը վերածնում է մեղաւորներին՝ նւիրելով նրանց նոր կեանք ու ներբնակելով նրանց (Յովհաննէս 3:5-8, 6:63, Հռովմայեցիս 8:9-11, Տիտոս 3:5). եւ նմանապէս, նկատում ենք որ Աստուածաշնչում սրբագործութեան գործը աւելի յատկապէս վերագրել է Սուրբ Հոգուն՝ որը ուղղում եւ ամրապնդում է հաւատացեալների սրբութեան աճը: Ներբնակող Հոգին սրբագործութեան ազդակն (գործակալն) է, եւ ինչպէս Պօղոսն է ասում Նա է «սրբութեան Հոգին» (Հռովմայեցիս 1:4): Ուստի, շատ տեղին է թում որ Նա կոչուում է «Սուրբ Հոգին»:

**Մարդու մէջ Աստուծոյ պատկերի վերականգնումը** – Մարդս սկզբնապէս ստեղծել էր Աստուծոյ պատկերով (Ծննդոց 1:26-27): Մարդը ստեղծել էր որպէս մի անձնական, հոգեւոր, յարաբերական, տրամաբանական, կամային ու բարոյական էակ՝ որպէսզի ճանաչել Աստծուն, հաղորդակցել Նրա հետ ու պաշտել Նրան. որպէսզի հաղորդակցել ուրիշների հետ. որպէսզի մտածել, տրամաբանել, սովորել ու որոշումներ կայացնել. որպէսզի ունենալ ուղիղ ու սխալի գիտակցութիւնը. որպէսզի լինել Աստուծոյ որոշ յատկանշերին հաղորդակից՝ լինել սուրբ, բարի, ուղղարար, արդար, ու սիրելի. որպէսզի գործածել իր մարմինը որպէս սրբութեան մի գործիք. եւ որպէսզի տիրել ու իշխել ստեղծագործութեան վրայ: Այս բոլորի մէջ մարդը ստեղծել էր արտացոլելու եւ արտայայտելու Աստուծոյ փառաւերջ ու սուրբ նկարագիրը: Այս էր Ադամի նախնական ստեղծուած վիճակը, ստեղծուած Աստուծոյ պատկերով, ստեղծուած մի բարոյական ուղղարար վիճակում: Ուստի Աստուած հռչակեց նրան որպէս «շատ բարի» (Ծննդոց 1:31; Ժողովող 7:29): Այս էր մարդկութեան շնորհած այն բարձր արժանապատուութիւնն ու կոչումը՝ ինչպէս Աստուծոց ստեղծուած ի սկզբանէ:

Բայց երբ Ադամը անհնազանդեց Աստծուն եւ մեղանչեց նա անմիջապէս մեռաւ հոգեւորապէս (Ծննդոց 2:17, Հռովմայեցիս 6:23ա), եւ ընկաւ իր նախնական ուղղարարութիւնից, եւ նրա բնութիւնը մեղսալի դարձաւ, ու նա եղաւ մեղքի սարուկը: Աստուծոյ պատկերը Ադամի մէջ, ու բոլոր մարդկութեան մէջ, խստօրէն աղտոտեց ու այլանդակեց: Մարդը լիովին պղծեց իր հոգու եւ մարմնի բոլոր մասերում, եւ կորցրեց կարողութիւնը ու ցանկութիւնը հաճեցնելու Աստծուն, ցոլացնելու Նրա սրբութիւնը, հնազանդելու եւ ծառայելու Նրան, եւ ուստի փառաբանելու Նրան (Ծննդոց 6:5, Յովհաննէս 6:44, Հռովմայեցիս 3:10-12, 5:19ա; 8:7-8, Եփեսացիս 2:1-3):

Ուրեմն, փրկանաւորութեան ծայրագոյն նպատակն է մարդու մէջ եղած Աստուծոյ պատկերի կատարեալ վերականգնումը: Այս է Աստուծոյ ծրագիրը Իր ժողովրդի համար, որը Նա սկսում է վերածնութեան մէջ, եւ շարունակում է սրբագործութեան ընթացքում (Կողոսացիս 3:10, Եփեսացիս 4:22-24): Բ. Կորնթացիս 3:17-18ում Պօղոսը ասում է որ հաւատացեալները Քրիստոսի պատկերին կերպարանաւորուում են աստիճանաբար, եւ այս Սուրբ Հոգու գործն է (Եփեսացիս 3:14-17): Մինչ Հոգին կատարում է այս ներքին գործը, սուրբ ապրուստի պտուղը աւելի ու աւելի երեւան է գալիս մեր կեանքի ընթացքում (Գաղատացիս 5:22-25): «Հոգու պտուղը» իրականում Քրիստոսի բարոյական պատկերն է որը աճողաբար կերտուում է հաւատացեալներում (Գաղատացիս 4:19, Ա. Կորնթացիս 6:20):

Ուր առաջին Ադամը ձախողեց արտացոլելու Աստծուն, վերջին Ադամը յաջողեց՝ Իր մարդեղութեամբ, կեանքով ու մահով, կատարելապէս հնազանդելով ու արտացոլելով Հօրը (Յովհաննէս 4:34, 5:30, 6:38, 17:4, Ա. Կորնթացիս 15:45, 49): Սրբագործութեան գերագոյն նպատակն է Քրիստոսանմանութիւնը, ոչ աստուածացումը: Հաւատացեալի մէջ եղած Աստուծոյ պատկերի վերականգնումը արդէն սկսել է ի Քրիստոս, եւ մի օր այն լիովին կ'իրականացի իւրաքանչիւրիս մէջ՝ երբ կատարելապէս կ'արտացոլենք Աստծուն մտքով, խօսքով, ու արարքով, ինչպէս սկզբնապէս ստեղծել էինք անելու: